2020թ. «Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայի վերաբերյալ հաշվետու ելույթ

Զեկուցող՝ Ս. Դալլաքյան

Հարգելի գործընկերներ և հյուրեր, ձեր ուշադրությանն եմ ներկայացնում 2020 թվականի **«Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման ու զարգացման հեռանկարները ՀՀ–ում» թեմայի վերաբերյալ հաշվետու իմ ելույթը:** Ահրաժեշտ է նշել, որ թեմայի ընտրությունը պատահական չէ, այն բխում է ՀՀ կառավարության 2019 թ. ծրագրի 7–րդ բաժնի «ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ» 7.1 «Բարձ տեխնոլոգիաներ» ենթաբաժնից: Թեմայի շրջանակներում.

- վերլուծվել են բարձր տեխնոլոգիական տնտեսությունը բնութագրող մի շարք համաթվեր և ենթահամթվեր՝ ՀՄՀ-ը մասնավորապես նորարարություններ ենթահամաթիվը, ՀՆՀ:
- ուսումնասիրվել է բարձր տեխնոլոգիական տնտեսությունը խթանող միջոցառումների համակարգը, մասնավորապես. հարկային, մաքսային, վարկային ֆինանսավորում, ինչպես նաև պետական աջակցության համակարգը,
- վերլուծվել են ռազմական ծախսերն ըստ առանձին բաղադրիչների, գործոնների և ՀՆԱ-ի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև ներկայացվել են տնտեսության վրա ռազմական ծախսերի ուղղակի և անուղղակի ազդեցությունների գնահատականները,
- ուսոմնասիրվել են ինովացիոն տնտեսության զարգացման առանձնահատկությունների օտարերկրյա փորձը՝ մասնավորապես Ճապոնիայի, Հարավային Կորեայի և Չիլիի,
- հիմնավորվել է առաջադեմ տեխնոլոգիական ձեռնարկությունների գործունեության արդյունքների լայնամասշտաբ առևտրայնացման անհրաժեշտությունը գլոբալ տեխնոլոգիական ընկերությունների Հայաստան ներգրավման և որոշ հայկական տեխնոլոգիական ընկերությունների գլոբալացման միջոցով,
- հիմնավորվել է ինովացիոն գործունեության ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծման անհրաժեշտությունը՝ ինովացիոն արտադրանքների արտահանմանն աջակցության, ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծման, գիտատեխնիկական պարկերի, բիզնես-ինկուբատորների, տեխնոպոլիսների, արտադրական կլաստերների և տեխնոլոգիական զարգացման գոտիների ցանցի ստեղծման միջոցով,
- ինչպես նաև դիտարկվել է կապիտալի շուկայի դերը ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման գործընթացում,
- բացահայտվել է ազգային տնտեսության մրցունակության բարձրացման կլաստերային մոտեցման անհարժեշտությունը բարձր տեխնոլոգիական ոլորտում, մասնավորապես. տեղեկատվա-հողորդակցման տեխոլոգիաների, բիոտեխնոլոգիաների, նանոտեխնոլոգիաների, ինչպես նաև ռազմաարդյունաբերության ասպարեզում,
- բացահայտվել է ռազմական ծախսերի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև ռազմական ծախսեր-տնտեսական աճին վերաբերող արդի հիմնահարցեր:

Հիմք ընդունելով նշված վերլուծություններն, բացահայտումներն ու հիմնավորումները՝ նշենք, որ թեմայի կատարման արդյունքում արձանագրել ենք հետևյալ տեսական և կիրառական արդյունքները, որոնց շրջանակներում առաջարկում ենք.

1. Ռազմական ծախսերի քաղաքականություն մշակելիս հաշվի առնել տարածաշրջանային բազմարկիչի գործոնը, քանի որ հիմնավորվել է, որ ռազմական ծախսերը կարող են ոչ միայն պահպանվել ամբողջ տնտեսությունում, այլ նաև բերել տնտեսական աճ ու հետազայոիմ կոռելացիայի ենթարկվելով ինքնապահովվել:

2. Տնտեսության մի շարք ճյուղերի մեջ, ինչպես նաև կառավարության գործունեության մեջ ներդնել կիբերանվտանգության, տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծման առաջավոր մոտեցումներ՝ մշակելով Հայաստանում կիբեռանվտանգությանը վերաբերող հայեցակարգ, որի արդյունքում կարող է ձևավորվել կիբեռանվտանգության կենտրոն՝ ՀՀ պետական և մասնավոր ենթակառուցվածքները կիբեռհարձակումներից պաշտպանելու նպատակով, և որքան հաջողվի արդյունավետ լինել այս դաշտում, այնքան ավելի արագ կապահովենք տեխնոլոգիաների մուտքն առօրյա կյանք:

3. Կապիալի շուկայի միջոցով իրականացնել ինովացիոն գործունեության ֆինանսավորման խթանում հետևյալ ուղիներով. հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում, մասնավորապես, ինովացիոն ոլորտում գործող ընկերությունների հարկագանձման մակարդակի նվազեցում, բաժնետիրական ընկերությունների ինովացիոն արտադրանքների արտահանմանն աջակցություն, արտադրական ձեռնարկությունների, գիտական և կրթական հաստատությունների միջև արդյունավետ համագործակցության ապահովում:

4. Իրականացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի ձեռնարկությունների կլաստերացման գործընթաց, որը ժամանակակից միտումների պայմաններում որոշակի հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման գործուն մեխանիզմների ստեղծման համար, ինչը առավելապես կիրառելի է Ճապոնական ինովացիոն տնտեսության գործընթացներում:

Եզրափակելով ելույթս՝ անհրաժեշտ եմ համարում նշել, որ թեման շատ արդիական է, քանի որ ողջ աշխարհը թևակոխում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» ժամանակաշրջան, ինչն իրենից ենթադրում է նաև բարձր տեխնոլոգիական տնտեսության առկայություն և հեռանկարային զարգացում:

Թեմայի շրջանակներում տպագրվել է 43 գիտական հոդված ինչպես տեղական հանդեսներում, այնպես էլ արտասահմանյան գիտական պարբերականներում: